բարձրացրեց եւ բերանը սրբեց: Երրորդը, երեսը խաչակնքելով, աստծուն փառք տոեց, ասելով, որ «խեր է»:

— Մեր աշխարհում այսպիսի սովորութիւն կայ, յարգելի բժշկապետ, — դարձաւ նա դէպի Ասլանը, — երբ մէկը երկու անգամ փռշտում է, դա լաւ նշան է: Յոյս ունենք, որ ձեր օջախից խէր կը տանենք:

Ի՞նչ օջախ, մտածում էի ես, կարծես վարպետ Փանոսի տունը մեր տունը լինէր:

— Ես էլ յոյս ունեմ..— պատասխանեց Ասլանը ծիծաղելով:

Նրա ծիծաղը բաւական քաջալերեց նրանց, եւ հերթով մօտեցան, չոքեցին Ասլանի առջեւ, սկսեցին ցոյց տալ իրանց «անթիքաները»: Նրանց մէջ կային զանազան իրեղէններ. հին դրամներ, կանանց տեսակ-տեսակ զարդեր, որպիսի են՝ ապարանջաններ, ականջի օղեր պղնձից շինուած, հուլունքներ թափանցիկ, գունաւոր քարերից շինուած, զէնքերի կտորներ, որպիսի են նիզակի եւ սլաքների ծայրեր, ահագին վահանի մի մասը, բոլորը պղնձից, եւ մի պղնձէ ցուլի ամբողջ գլուխ, այլեւ կաւից շինած փոքրիկ եւ մեծ անօթներ: Այդ բոլորը նրանք տեղաւորել էին իրանց ծոցերում, գրպաններում եւ մինչեւ անգամ ֆէսերի վրայ փաթաթած եազմաների մէջ: Բայց ամենահետաքրքրականը նրանց ցոյց տալու ձեւի մէջն էր: Սկզբից ցոյց էին տալիս մի շատ չնչին բան եւ սկսում էին գովաբանել, երբ այդ չէր անցկենում, դուրս էին հանում նրանից լաւը, երբ այդ էլ հաւանութիւն չէր գտնում, դուրս էին բերում աւելի լաւը, հաւատացնելով, որ այլեւս ոչինչ չունեն, երբ այդ էլ հաւանութիւն չէր գտնում, այս անգամ ամենայն դժոարութեամբ դուրս էին բերում, հագուստի մի տեղում թաքցրած մի այլ բան, եւ սկսում էին երդոել, որ ուրիշ ոչինչ չունեն: Ի հարկէ, նրանից յետոյ դուրս էին բերում շատ ուրիշ բաներ:

Ես կանգնած նայում էի եւ զարմանում էի Ասլանի համբերութեան վրայ: Եթէ ես նրա տեղը լինէի, երեքին էլ դուրս կը վռնդէի, բայց նա ամենեւին ցոյց չէր տալիս, որ այդ խաբեբայութիւնները իր համար շատ զզոելի են: Վերջապէս նա ընտրեց մի քանի իրեղէններ եւ խնդրեց, որ գնահատեն:

— Մենք քեզանից միթէ՞ փող պիտի առնենք, յարգելի բժշկապետ, — պատասխանեցին նրանք զարմացած կերպով: - — Եթէ փողի վրայ խօսելու լինենք, դրանք գին չունեն:

— Ապա ինչպէ՞ս պէտք է տաք, — հարցրեց Ասլանը ոչ սակաւ զարմանալով: